Մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «Չորաթանի Ա. Ուդումյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Կերպարվեստ /4 դասաժամ/, Ֆիզիկա /6 դասաժամ/, Մայրենի /7 դասաժամ/, Անգլերեն /23 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

-Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

-Անձնագրի պատճենը,

-Ինքնակենսագրություն (Ձև 4),

-Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

-Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

-Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են **2024 թվականի հունվարի 18-ից 31-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 5-ին՝ ժամը 14:00-ին,** Տավուշի մարզի Չորաթանի Ա. Ուդումյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Չորաթան, փ. 2, շենք 7: Տեղեկությունների համար զանգահարել՝ (093)-35-16-90, (099)- 35-16-90 հեռախոսահամարով: